# ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Ուսուցչի օրվա առթիվ

05.10.2023

Սիրելի՛ ուսիցիչներ,

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ՝ ուսուցիչներին, դաստիարակներին, կրթության գործի նվիրյալներին՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Ուսուցիչը սոսկ մասնագիտություն չէ: Այն կոչում է, վեհ առաքելություն:

Ձեր աշխատանքը, համբերությունը, հոգատարությունը և նվիրվածությունն օգնում են բոլորին բացահայտել իրենց կարողությունները, մարդկային լավագույն հատկանիշները, ձեռք բերել գիտելիքներ և հոգևոր արժեքներ, որոնք հավերժ հուսալի հենարան են դառնաում կյանքում:

Մենք միշտ սիրով ու երախտագիտությամբ ենք հիշում մեր դպրոցի և կյանքի ուսուցիչներին, նրանց խորհուրդներն ու խրատները՝ նույնիսկ երկար տարիներ անց:

Դպրոցը պետության ու ժողովրդի ապագան կերտող կարևորագույն օղակն է:

Դուք մշտապես հուսալի թիկունք եք եղել հայոց պետականության հիմքերի ամրացման ու ամրապնդման գործում: Անգամ պատմության ամենադժվարին ժամանակահատվածներում էլ հայ ուսուցիչը շարունակում էր սերունդներ կրթել՝ հավատալով իր պետականության հզորացմանն ու ամրապնդմանը:

Սիրելի՛ մանկավարժներ,

Այսօր էլ ձեզ բախտ է վիճակված լինել դժվար փորձություններով նոր ժամանակների, մարտահրավերներով լի ժամանակահատվածի ուսուցիչը, ումից ավելի մեծ են ակնկալիքները, ում աշակերտներն ավելի պահանջկոտ են, ում տված գիտելիքներն ավելի պահանջարկված է:

Այսօր բոլորս պետք է էլ ավելի համախմբվենք և էլ ավելի մեծ սեր և հոգատարություն տարածենք, քանի որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հազարավոր աշակերտներ և հարյուրավոր ուսուցիչներ մեր բոլորի աջակցության կարիքն ունեն:

Վստահ եմ, միայն փոխօգնությամբ, համերաշխությամբ, համամարդկային սիրով այս փորձությունն էլ կհաղթահարենք:

Ձեր տաղանդի, պրոֆեսիոնալիզմի և մասնագիտական բարձր կարողությունների շնորհիվ մեր սերունդները պետականությունը էլ ավելի ամուր և անսասան հիմքերի վրա են դնելու, պահպանելու և շենացնելու են Հայաստան աշխարհը:

Սիրելի ՛ մանկավարժներ, ևս մեկ անգամ շնորհավորելով՝ ձեզ մաղթում եմ առողջություն, երջանկություն, բարեկեցություն: